ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2023 թվականի N 1675 - Լ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 21-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին և 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառումը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության տրամադրումը ֆինանսավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2-օրյա ժամկետում.

2) ապահովել սույն որոշմամբ հաստատված միջոցառման իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ համակարգ) մշակումն ու ներդրումը Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգն սպասարկող կապալառու կազմակերպության միջոցով՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում.

3) ապահովել համակարգի շահագործումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից.

4) ապահովել ծառայության կայքէջի միջոցով վճարող կազմակերպության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը սույն որոշմամբ հաստատված միջոցառման շահառուներին.

5) ապահովել բռնի տեղահանված՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող չափահաս շահառուների տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարի, անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, հանրային ծառայությունների համարանիշ (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար) «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի կողմից ծառայությանը տրամադրելը:

3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ սույն միջոցառման շրջանակներում բռնի տեղահանվածների

տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարի, անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, հանրային ծառայությունների համարանիշ (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար) ծառայությունից ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ծառայությանը տրամադրել այդ անձանց վերջին սահմանահատման վերաբերյալ տվյալները:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝

1) «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի միջոցով ապահովել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հավաքագրված և մշակված (բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ նույնականացված)՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածների տվյալների (անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարի, անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, հանրային ծառայությունների համարանիշ (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար) տրամադրումը ծառայությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-օրյա ժամկետում, իսկ այդ տվյալների փոփոխությունները՝ առնվազն շաբաթական պարբերականությամբ՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ը.

2) անձը հաստատող փաստաթուղթ չունեցող՝ սույն կետի 1-ին ենթակետում նշված անձանց սույն որոշման շրջանակներում իրենց իրավունքներն իրացնելու համար տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված ժամանակավոր վկայական:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին ծառայությանը տրամադրել՝

1) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված միջոցառման շրջանակներում անձանց տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարի, անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, հանրային ծառայությունների

համարանիշ (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար) ծառայությունից ստանալուց հետո 2-օրյա ժամկետում այդ անձանց անվամբ բացված բանկային հաշիվները և բանկի անվանումը, որոնց կցված վճարային քարտերով տեղեկատվությունը տրամադրելու օրվան նախորդող 15 ամիսներին կատարվել է ելքի գործարք, իսկ այդպիսի գործարքի բացակայության դեպքում՝ առկա է դրանց կցված վավերական վճարային քարտ.

2) նոր բացված այն բանկային հաշիվները (որոնց կցվել (կցվելու է) վճարային քարտ) առնվազն շաբաթական պարբերականությամբ՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ը:

6. Առաջարկել Օպերատիվ շտաբին՝ ծառայությանը տրամադրել Լեռնային Ղարաբաղի այն քաղաքացիների տվյալները (անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, տարի, անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, հանրային ծառայությունների համարանիշ, (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համար), ովքեր 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ գտնվել են Հայաստանի Հանրապետությունում՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-օրյա ժամկետում կամ տրամադրված տվյալների փոփոխությունները՝ փոփոխություններ կատարելուց հետո՝ 1-օրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ